№ 178 Հոկտեմբերի 8 (20) 1880 Հոկտեմբերի 8 (20) № 178

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Ստորագրությունները դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարություն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարությունների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—Ներքին տեսություն: Նամակ Ալէքսանդրոպոլից: Նամակ Երևանից: Նամակ Գանձակից: Նամակ Շամախուց: Ներքին լուրեր:— Արտաքին տեսություն: «Journ. de st. Petersb» լրագրի յօդուածը: «Գոլոս» լրագրի թղթակցությունը:—«Մշակի» հեռագիրներ:—Ցայտարարություններ:—Բանասիրական: Նամակ Թիւրքիայից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

—

Սեպտեմբերի 20

Վերջին քաղաքական անցքերի ազդեցությունն շնորհիւ, Թիւրքիայի հայ ազգը կրօնական համայնքից փոխվեցաւ քաղաքականապէս ազգությունն, և այդ փոփոխությունից յետոյ Նրան առօրեայ կեանքի կենսական նդիրներն և պահանջները այնքան բազմակողմանի և բաղադրեալ նշանակություն ստացան, որ ամեն մտածողը, ինքն իրան հարց առաջարկեց՝ թէ ով պէտք է կատարէ այդ գործերը, ով պէտք է աշխատէ ընդհանուրի համար, և ով պէտք է իրականացնէ այն յոյսերը որոնցով ապրում է այժմ հայ ազգը: Եւ ամեն անգամ, մենք տեսնում ենք հասարակական գործունէությունն ասպարէզի մէջ երեք առանձին գործիչներ՝ հայ լրագրությունը, հայ երիտասարդությունը և հայ հոգևորականությունը:

Խօսենք հայ ազգի ամենաանհրաժեշտ մի խնդրի վերաբերությամբ, այն է ազգության գաղափարի ընդհանրացնելու, և կրօնական գաղափարի վերաբերությամբ, այն է ազգության գաղափարի փոխարինվելու վերաբերությամբ, որովհետև այդ հարցը հայի համար կենսական խնդիրներից առաջինն է և ամենակարևորն է:

Աչա մօտաւորապէս չորս տարի է, որ լրագրությունը Կովկասում, կամ աւելի լաւ է ասել «Մշակի» լրագիրը հայերի մէջ աշխատում է ժամանակակից դիտության իրական և անհրաժեշտ խնդիրներ յարուցանել, և ընդհանրացնել ամբոխի մէջ արտայայտելով միանգամայն այն միտքը, թէ Կովկասի հայը բնականապէս պարտաւոր է բարոյապէս օգնել Թիւրքիայի համարիւն եղբայրներին, առանց կրօնի և համոզմունքի զանազանություն անելու:

Լրագրությունը մեր մէջ կատարեալ նահատակություն է. մենք Նրան կարդում ենք որպէս մի զուարճություն, մի ինքնասիրական ցոյց և լրագրության յայտնած մտքերը մեր մէջ գտնէ մի քանի րօպէ հիւրասիրություն չեն գտնում, մենք իսկոյն մոռանում ենք:

«Մշակը» ինքնազոհություն է գործում, նա աղաղակում և անդադար կրկնում է կրօնի և ազգության խնդիրը, նա կամենում է որ հայը հայ լինի, նա յարգում է կրօնական կուսակցությունների համոզումը հաւասարապէս, նա ցանկանում է որ հայ ազգի առանձնացած կրօնական կուսակցությունները կազմէին ազգային միություն: Գտնվում են մեզանում շատերը, որ արհամարում են այդ գաղափարները, ասելով, թէ այդ լրագիրը կրօնափոխություն է կամենում: Լրագիրը ասում է, թէ մեր անձնական կրքերը, դաւաճան կեղծ ազդասիրությունները, եսականության չար նախանձը պէտք է վերցվեն մեզանից, մեր միտքը, մեր մտածումը այժմ պէտք է լինի ազգության ներկան, մեր ոյժերը պէտք է նուիրենք ազգային միությունը, եղբայրական համակրությունը: Բայց այդ մտքերը ամբոխի մեծամասնությունը մատչելի, հասկանալի չեն լինի, որովհետև լրագրի մտքերին չեն համակրում հայ երիտասարդությունը և հոգևորական դասը, որոնք ապրում են նոյն իսկ ժողովրդի շրջանում, և այդ պատճառով, լրագրի յայտնած մտքերը երկար ժամանակ կը մնան անգործադրելի: Լրագրությունը երբեմնապէս պաշտպանելով հասարակաց շահերը, կողմնակի կամ ուղղակի յանդիմանում է մի վատ առաջնորդի, մի անգործ և անպարտաճանաչ ուսուցչի, յափշտակող երեցփոխանի, կամ մի որ և է անազնիւ հասկական երևոյթ արտադրող անձնաւորության: Բաւական է, որ մի լրագիր յայտնէր մի հոգևորականի անազնիւ վարմունքը, դաւառական որ և է քաղաքում պատահած մի անցք, իսկոյն հոգևորական դասը կը յայտնէ իր «արդարացի» բողոքը լրագրության դէմ, պաշտպանելով իր պատկառելի պաշտօնի պատիւը հասարակության առաջ, թէև ժողովրդական արդարացի դժգոհությունները, ցաւոք պէտք է ասել, որ անպակաս են հոգևորական դասի դէմ:

Լրագրությունը, բացի ժողովրդին օգտաւէտ մտքեր յայտնելուց, ունի և մի մեծ նշանակություն, այն է հասարակության մէջ ընթերցանություն տարածել: Բայց լրագրությունը մեր մէջ դժբաղդաբար ծառայում է առանձնապէս միմանց հակառակ կուսակցություններին, որոնք անվերջանալի կերպով յարձակվում են միմեանց յայտնած մտքերի դէմ:

Լրագրությունը մեզանում այն ժամանակ իրական օգուտ կարող կը լինի տալ եթէ նրա յայտնած մտքերը, գաղափարները, հայացքները կը լինեն լուրջ ազգային թերթի խորհրդածություններ հեռու այն նեղ կրօնական հայացքից, որ տիրում է սորանից առաջ մի յայտնի լրագրության շրջանում: Գաւառական թղթակցությունները պէտք է լինեն նրա ձայնի արձագանքը, նրա ճշմարիտ ներկայացուցիչ ժողովրդի առաջ, լրագրության արծարծված գաղափարի անմիջապէս իրականացնողը, ընդհանրացնողը ամբոխի մէջ:

Լրագրությունը միայն անզօր է գործելու, ընդհանուրի վերաբերությամբ. լրագրությունը պէտք է օգնեն բոլոր դաւանություններին պատկանող անհատները անխտրաբար, պաշտպանելով մտքի և նպատակի համերաշխություն և ձգտումների միակերպ առաջնորդությունը: Այն օրից, երբ «Մշակը» հաւասարապէս պաշտպանեց և համակրեց ամբողջ Կովկասի հայերին, առանց կրօնի խնդրության, նա դարձաւ ազգային լրագիր, նրանում թղթակցում ենք և մենք կաթոլիկ հայերս, և լուսաւորչականները և աւետարանականները: Կովկասի հայերի այդ առաջին միության և ազգային ինքնաճանաչության քայլ էր, որ կատարվեցաւ «Մշակի» անեղծ եղբայրական ցանկությամբ: «Մշակը» իրաւամբ կարող է ազգային լրագիր կոչվել, երբ նա Կովկասում առաջին պաշտպան հանդիսացաւ ազգային գաղափարի, և նրա ցանկությունը կը պակէ այն ճմարիտ իրողությունը, որ հաւասարապէս բոլոր դաւանության հայերը, ժամանակով կը ճանաչեն նորա պաշտպանությունը Ազգության գաղափարի:

Պետրոս Բէպուրեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Սեպտեմբերի 29

«Մշակի» մէջ շատ անգամ պարզ կերպով բացատրված էր թէ ինչ պիտի լինի գաւառական կառավարության երեք անգամ սնանկությունը՝ որ է ընդհանուր պարտուց, թղթադրամի և մէթալիկի սնանկություններն, խեղճ ժողովրդի դրամագլուխը վճացուցին և մեծ հարուած տուին Հայաստան բնակող դրամատէրներու, որ մեծաքանակ ունէին այս արժեքներէ, և հայ գիւղացուց, որք շատ թղթադրամ և մէթալիկ ունէին: Հարկ է ասել թէ ինչպիսի օրէնքներով կը կաշկանդէ Թիւրք կառավարությունը երկրին նիւթական բարգաւաճումը, զի վաճառականություն և արհեստք քրիստոնէից ձեռքըն են. Թիւրքերը չեն ուզեր որ մնան, և հայերն որք իրենց աշխատասիրության և ընդունակության գաղափարը աշխարհի տուած են, այսօր ամենաթշուառ վիճակի մէջ են գրեթէ: Արդ պարզ է հարցնել. ժողովուրդ մը, որ բարեբար երկիրներ ունի, վաճառականության յարմար տեղեր գրաւած էր ինքն, աշխատասէր, բարոյականի տէր և կարող է, բաւական դրամագլուխ ունէր, և օրըստօրէ կը աղքատանայ, ուրեմն հարստանալու համար ուրիշ ինչ պէտք է: Այս մտածություններն առաջնորդ կըլլան նոցա, որք կը գործեն, և ոչ թէ բարձր պաշտօններու հասնելու խանդը, ինչպէս կըսէ «Օսմանլի»: Պ. Զէրաղ Կոպտին քլիսի մէջ լաւ հրաչակեց ի ներկայություն աշխարհիս մեծ տնտեսագէտներու թէ «Ասիայի մէջ կը գտնուի ժողովուրդ մը, որ տակաւին արտադրելու ազատություն չունի և բնութենէն մասնաւոր կերպիւ նպաստաւորեալ երկրի մը մէջ, որ խանձարուրքն եղած է հանճարեղ և գործունեայ ազգաց, հարստաշարությունք կը դատապարտեն արդադրողն ի կործանումն և ըսպառողն ի սով:

Հայաստանի այս տնտեսագիտական վիճակն լաւ պարզուեցաւ պ. Պրայսի, որ ի հարկին պէտք եղած բացատրություններն կուտայ անշուշտ խորհրդարանի մէջ: Հայ երիտասարդության մի քանի պատգամաւորություններ ներկայացան պ. Պրայսի, յայտնեցին շնորհակալություն այն համակրանաց համար, զոր պարոնը ցոյց տուաւ մեզ նկատմամբ խորհրդարանի մէջ, և իրեն տեղեկացուցին ազգային մտաւոր զարգացման վիճակը: Պ. Պրայս ի մէջ այլ յորդորներու կարտասանէ նաև սա խոսքերն պատգամաւորության ամենէն նշանաւոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 27 սեպտեմ. 80

Արքունի պալատը մեծ մտատանջության մէջ էր: Սուլթանի կանանոցի սև պահապանապետը մեռաւ, և յաջորդը պէտք էր ընտրել, և ընտրեցին: Եթէ տաճկաց քաղաքակրթության մէջ որչափ յառաջադիմած լինելին կուզէք իմանալ, այս առիթս լաւ է:—Թիւրք թերթերն կը հրատարակեն թէ ինչ մեծ դեր կը կատարէ սև պահապանապետը. նորա բարձրապատիւ տիտղոսը կուտան, տէրության աստիճանաւորներուն գլխաւորն է, և Շէյխ-իւլ-Իսլամէն և մեծ վեզիրէն վերջը ինքն կուգայ: Նորա կամքն շատ անգամ աւելի զորություն ունի քան թէ բոլոր նախարարության կամքը, և ստէպ Բ. Դրան որոշմանց հակառակ որոշում դրուած է, ազդեցությամբ սև ներքինիին: Շատ ներքինիներ Սադրազամ ընտրուած են: Այս տեղեկություններն Թիւրք թերթերն կը հաղորդեն: Կարծեմք սուլթանէն վերջը Տաճկաստանի իշխանը կանանոցի պահապանն է: Ալ մտածենք թէ ինչ աստիճան յառաջադիմության ընդունակ է ժողովուրդ մը, ուր հասարակաց լուսաւորության պաշտոնեայն սև ներքինի մը շատ ստորին վիճակի մէջ կը գտնուի, յորում ամեն բարձր պաշտոնեայք Նորա առջև կը խոնարհին, և դեռ կարծեմք որ այսպիսի երկիր մը փրկուելու կարող է: Առաջին նախարար Սայիդ բաշա այդ փրկության համար կուզէ ամեն միջոց ի գործ դնել, բայց յաջողություն գտնելն շատ տարակուսական է: Դիւանագիտական միջոցներու հետ միասին իւր ուշադրությունը մամլոյ վրա կը դարձնէ: Ժամանակ մը Բ. Դուռը շատ կը կաշառէր եւրոպական մամուլը, այնպէս որ Ֆուադ բաշա կըսէ եղեր թէ մեծ փոխառություն մ'ալ մամլոյ համար պէտք է ընել: Ատեն մ'է այդչափ ուշադրություն չէին ընծայեր. այժմ Սաիդ բաշա կուզէ նորէն առջինին պէս ընել: Արէյս անուն ֆրանսիացի գնդապետ մը, որ սուլթանին ծառայության մէջն էր, այս օրերս Եւրոպա խրկեցին մեծամեծ գումարներ դնելով նորա տրամադրության տակ Եւրոպոյ թերթերն բարեկամ ընելու համար: Պ. Արէյս մասնաւորապէս երկու միջոցներու պիտի դիմէ, մին է թերթերուն պաշտպանողական յօդուածներ գրել տալ ի Նպաստ Տաճկաստանի, միւսն՝ որ թերթերն որ բաւական յառաջացած են ընդդէմ Թիւրքիոյ և իրենց ներելի չէ պաշտպանություն ընել, համոզել զանոնք որ եթէ պաշտպանուլ իւն տընեն, գէթ յարձակում ալ չընեն, և այս ալ բաւական բան է:—Այս կէտն մեզ համար կարևոր է. Եւրոպոյ մամուլն ընդհանրապէս մինչև հիմա մեզ համար համակրական լեզուով կը խօսէր, և կը սպասեմք որ այսուհետև հասարակաց կարծիքն աւելի լուսաւորեն մեր խնդրոյն համար, սակայն մեք նոցա շատ պղատոնական փոխարինություն կընեմք. չունինք նաև մասնաւոր օրգան մը մեզ համար: Լաւ կըլլայ եթէ քիչ մը ասոնց ուշադրություն ընեմք:—Կ. Պոլսոյ մէջ ալ կառավարությունը աղէկ մը սանձեց քրիստոնեայ թերթերն: Իսկ տեսնելով որ Թիւրք թերթերուն խիստ լեզուն բաւական վրդովում կը պատճառէ, նոցա խմբագիրներուն պատուիրեցին որ այսուհետև քիչ մը մեղմ գրեն, որով քանի օր է տաճիկ լրագիրներն այնքան վայրենաբար չեն գրեր: Ամենէն շատ Օսմանլի ֆրանքօ-Թիւրք թերթը կը ցաւի, զի հայկական խնդիրն իրեն դրամագլուխ ըրած էր. այն թիւերը, յորում մեզ դէմ կը գրէր, մի հատ չէր մնար. այսօր խմբագրատան մէջ անչնար է հայոց դէմ յօդուած պարունակող թերթէն մէն գտնալ, և խմբագրապետն իսկ զարմանք կը յայտնէր: Օսմանլի ողբեր կը կարդայ հայկական խնդրոյ առթիւ «իբր թէ բաւական չըլլային կըսէ, առկախ մնացած այնքան խնդիրներն Արևելից վերածնությունը արգելելու համար, և ահա կը սպառնան մեզ հայկական խնդիր մը ևս, զոր արհեստական կերպով կը զարթուցանեն: Բայց չեն գիտեր թէ այսու փոխանակ հայոց վիճակը բարւոքելու, աւելի կը վատթարացնեն զայն, զի նոր խնդիր մը ուրիշ բանի չը ծառայեր, բայց եթէ աւելի երկարելու այն ճգնաժամը որ կը ցամքեցնէ ամենայն աղբիւր բարգաւաճման և նիւթական բարեկեցության:

«Ատեն մը երբ հայերն աւելի նուազ ճանչցուած էին Եւրոպա և ոչ այնքան հարեալ այն գաղափարաց, որք այժմ ի պատուի են, և զոր արդարապէս կը անուանք կոչել՝ չարաբեր գաղափարք, շատ աւելի լաւագոյն էր հայոց վիճակը: Կայսրության բոլոր գանձերն հասարակաց թէ անհատական իրենց ապիտերուն մէջն էր. իրենցմէ կախում ունէ այսօր երկրին ամենէն մեծ դրամագէտներն լինել: Բայց յորմէ հետէ ցնորական գաղափարներ տիրապետեցին այս հասարակության երիտասարդաց մէկ մասին գաղափարաց վրա, կը տեսնեմք անձեր, որք նախապատիւ կը համարեն թողուլ լքանել ճարտարարուեստության, վաճառականության և գանձուց օգտակար ասպարէզներն և նետուիլ քաղաքական բաղդախնդրության մէջ, որ այնքան վտանգաւոր են թէ երկրին ապագային և թէ նոցա համար, և որ առ այժմ զիրենք աւելի դժբաղդ կընեն:»

Օսմանլիի խօսքերէն կը տեսնուի թէ բարձր շրջանակներու մէջ իսկ երկիւղ մը կը զգան հայկական խնդրոյ ապագային յարուցանելիք փոթորիկներու վրա, և տնտեսագիտական հրապոյրներով կուզեն զմեզ պատրել: Եթէ Օսմանլիի խմբագիրներն ի մօտոյ ուսումնասիրած լինէին զհայերն, պիտի տեսնէին թէ ճիշտ տնտեսագիտական հարցերն են, որ պատճառ եղան հայկական խնդիրն զօրացնելու: Ատեն մը մեր հայրեր կը կարծէին թէ քրիստոնեայ և մահմետական կրօնից մէջ եղած խտրությունը բաւական է հայ ազգությունն պահպանությանը. բայց այն երիտասարդությունը, որ ըստ Օսմանլիի՝ ցնորական գաղափարներու տուած է ինքզինքն, բաւական սորվեցաւ քաղաքական տնտեսագիտությունը և տեսաւ որ միայն կրօնքը բաւական չէ ազգի մը պահպանության, և թէ կառավարությունը լաւ ըմբռնած ըլլալով այս ճշմարտությունը, հայ ազգի հարստության աղբիւրներն ցամքեցնելու հետամուտ էր, որով կանուխ կամ ուշ հայ ժողովուրդը ինքզինքն ողորմելի կամ փճանալու մարձ վիճակի մէջ կը տեսնէր: Հոս տեղը չէ այս նիւթին վրա երկարօրէն խօսել, ասենք որ կերթան Հայաստանը կը պտըտեն, զայս իրենց աչքերովը կը տեսնեն: Իսկ Կ. Պոլսոյ մէջ ալ